ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ

Գառնիկ Գուրգենի Անանյանը ծնվել է 1934 թ. հուլիսի 22-ին, Իջևան քաղաքում: 1952 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1953-ին ընդունվել և 1958-ին գերազանցության դիպլոմով ավարտել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը: Մեկ տարուց ավելի աշխատել է «Իջևանի կոլտնտեսական» թերթի խմբագրությունում՝ իբրև գրական աշխատող, իսկ 1959–1961 թթ. եղել է ՀԼԿԵՄ Իջևանի շրջկոմի առաջին քարտուղարը:

1961–1964 թթ. սովորել է ԵՊՀ-ի ասպիրանտուրայում: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայ գրականությունը և գրական քննադատությունը «Մուրճ» ամսագրում 1889–1900 թթ.» թեմայով: 1982 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Եղիշե Չարենց. կյանքի և ստեղծագործության հիմնահարցեր» թեմայով: 1983 թ.-ից պրոֆեսոր է:

1965 թվականից դասախոսել է ԵՊՀ-ի բանասիրական, ապա՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետներում: 1977–1985 թթ. եղել է համալսարանի հրատարակչության տնօրենը: Նրա ղեկավարած տարիներին հիմնադրվեցին «Ուսանողի գրադարան» և «Հայագիտական» մատենաշարերը: Հրատարակվել են «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Մ. Չամչյան, «Հայոց պատմություն» և մի շարք այլ կոթողային աշխատություններ:

1985–1996 թթ. եղել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկանը, 1987–2000 թթ.՝ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչը: 1999 թ. հոկտեմբերի 1-ից ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադիր դեկանն էր:

1974 թ.-ից Հայաստանի գրողների միության անդամ էր, 1986 թ.-ից՝ Հայաստանի ժուռնալիստների միության: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ էր 30 գրքի, կազմել ու հրատարակության էր պատրաստել շուրջ 20 գիրք, հեղինակել էր մոտ 100 գիտական և ավելի քան 200 գրական-հրապարակախոսական հոդված: Արժանացել է Հայաստանի ժուռ-

նալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակին: Ուներ երեք դուստր և երեք թոռնիկ:

Մեծավաստակ գիտնական, մանկավարժ, հրապարակախոս, շիտակ և արդարամիտ քաղաքացի Գառնիկ Անանյանի հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների, ուսանողների և նրան ճանաչողների սրտերում:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԱՏ
ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական խորհուրդը և աշխատակազմը խորապես սգում են խմբագրական խորհրդի երկարամյա անդամ Գառնիկ Անանյանի անժամանակ մահը և միանում սույն մահախոսականին: